ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2020 թվականի N 116-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՇՏԱԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 19-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում նոր կորոնավիրուսային հիվանդության *(COVID-19) (այսուհետ՝ վարակ)* տարածման կանխարգելման և արձագանքման շտաբ:

2. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում վարակի տարածման կանխարգելման և արձագանքման շտաբի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում վարակի տարածման կանխարգելման և արձագանքման շտաբի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թվականի մարտի 20
ք. Հրազդան

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի N 116-Ա ՈՐՈՇՄԱՆ

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՇՏԱԲԻ

1. *Շտաբի պետ՝* Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետ,

2. *Շտաբի պետի տեղակալ՝* Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ,

3. *Շտաբի անդամներ՝*

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալներ,

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական,

3) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետ,

4) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության Կոտայքի մարզային վարչության պետ,

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ,

7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ,

8) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ:

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի N 116-Ա ՈՐՈՇՄԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՇՏԱԲԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում վարակի տարածման կանխարգելման միջոցառումներ իրականացնող շտաբի (այսուհետև՝ շտաբ) աշխատակարգը:

II. ՇՏԱԲԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Շտաբի նպատակը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում վարակի տարածման պայքարի և կանխարգելման գործընթացի ապահովման համար բնագավառին վերաբերող հարցերի քննարկումն է, ինչպես նաև բոլոր շահագրգիռ ոլորտների համագործակցության, ներգրավվածության և արձագանքի համակարգումը, կարիքների գնահատումը, գերակա խնդիրների վերհանումը, գործընթացի հսկողությունը և համակարգումը: Շտաբը ներգրավելու է նաև համայնքներում ստեղծված շտաբներին և քննարկելու է բոլոր ռիսկերը: Ժամանակին օպերատիվ տեղեկատվությունը բոլոր հնարավոր կապի միջոցներով փոխանակելու է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին:

3. Շտաբը՝

1) Համակարգում է Կոտայքի մարզում վարակի տարածման համաճարակային իրավիճակը, արձագանքման միջոցառումները՝ շահագրգիռ կողմերի գործողությունների համակարգման միջոցով,

2) օժանդակում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում գործող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարակի տարածման կանխարգելման աշխատանքներին,

3) կազմակերպում է Կոտայքի մարզում վարակի տարածման կանխարգելման հարցերին վերաբերող հանդիպումներ, քննարկումներ,

4) կազմակերպում է Կոտայքի մարզում վարակի տարածման պայքարի և կանխարգելման միջոցառումների վերանայման և լրամշակման աշխատանքները.

5) անհրաժեշտության դեպքում քննարկում է Կոտայքի մարզում վարակի տարածման կանխարգելմանն առնչվող կառույցների կողմից, իրենց ոլորտներին վերաբերող հարցերի շուրջ առաջարկությունները՝ գերատեսչություններին ներկայացնելու նպատակով:

4. Հիմնական միջոցառումները՝

1) Ռիսկի գործոնով պայմանավորված՝ յուրաքանչյուր ստորաբաժանման ենթակայության պետական մարմիններում և տեղական ինքնակառավարման մարմիններում ձևավորել թիմեր և ապահովել դրանց պատրաստվածությունը,

2) մշակել շտաբի աշխատանքային հաշվետվության ձևեր:

III. ՇՏԱԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Շտաբը իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

6. Շտաբի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է շտաբի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

7. Շտաբի նիստերն արձանագրվում են: Նիստերի արդյունքում կազմված արձանագրություններն ստորագրվում են շտաբի պետի կողմից:

IV. ՇՏԱԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳ

8. Շտաբի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստի անդամների ձայների կեսից ավելի ձայներով:

V. ՇՏԱԲԻ ՊԵՏԸ

9. Շտաբի պետը՝

1) հրավիրում և վարում է շտաբի նիստերը,

2) ապահովում է շտաբի բնականոն գործունեությունը,

3) շտաբին է ներկայացնում նիստերի օրակարգերի նախագծերը,

4) համակարգում է շտաբի աշխատանքը,

5) շտաբի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է շտաբի պետի տեղակալը:

VI. ՇՏԱԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

10. Շտաբի անդամները՝

1) իրավունք ունեն՝

ա. հարցեր ներկայացնելու շտաբի քննարկմանը,

բ. առաջարկություններ ներկայացնելու շտաբի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ,

2) մասնակցում են շտաբի աշխատանքներին,

3) իրենց իրավասության շրջանակներում կատարում են շտաբի որոշումները և շտաբի պետի հանձնարարականները՝ վարակի տարածման կանխարգելմանն առնչվող վտանգների և դրանց դիմակայման հարցերի վերաբերյալ: